Հավելված 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք _____, _____._____._____թ.

1. «Արդշինբանկ» ԲԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 վարչական շենք», գրանցման վկայական՝ թիվ 0394, գրանցման համարը՝ 83, վկայականի համար՝ 0394, ՀՎՀՀ՝ 02566492), ի դեմս Վարչության նախագահ Արտակ Անանյանի, ում անունից 04.09.2025 թվականին տրված N 1670-9555 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս գործերի կառավարիչ Հրաչյա Առաքելյանը ՝ մի կողմից, և

2. «_____» _____ (գտնվելու վայրը. «_____», պետական գրանցման վկայական. _____), այսուհետ՝ **«Մասնակից»**, ի դեմս տնօրեն _____Ի, ով գործում է համաձայն կանոնադրության, մյուս կողմից,

միասին անվանվելով **Կողմեր**, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Մասնակիցը մասնակցում է Պատվիրատուի կողմից հայտարարված՝ «Արդշինբանկ» ԲԲԸ ամենօրյա մաքրության եվ ընթացիկ սպասարկման աշխատանքների իրականացման մրցույթին, այսուհետ՝ «Մրցույթ», Կողմերը եկան փոխադարձ համաձայնության այն մասին, որ

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված Մրցույթում հաղթող ճանաչվելու և հետագա համագործակցությունից հրաժարվելու (պայմանագիրը (արձանագրությունը) կնքելուց խուսափելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու) դեպքում Մասնակիցը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ Մրցույթում իր կողմից առաջարկված գնի 5 (հինգ) տոկոսի չափով: Սույն կետով սահմանված տուժանքը չի կիրառվում, եթե Մասնակիցը գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) հրաժարվում է պայմանագրի կնքումից՝ մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո Պատվիրատուի կողմից Մասնակցին ներկայացված կնքման ենթակա պայմանագրի՝ մրցույթում չհայտարարված պայմանները, Մասնակցի համար անընդունելի լինելու հիմքով: Ընդ որում, սույն կետով սահմանված հրաժարումը Մասնակցին չի ազատում սույն կետով սահմանված պատասխանատվությունից, եթե այն Պատվիրատուին ներկայացվում է սույն պայմանագրի 1.1.2 կետում նշված տուժանքի վճարման ժամկետը լրանալուց հետո:

1.1.2 Մասնակիցը սույն պայմանագրի 1.1.1 կետում նշված տուժանքի վճարման պարտավորությունը պետք է անվերապահորեն կատարի Պատվիրատուի համապատասխան պահանջն ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում: Ընդ որում, սույն կետով նախատեսված պահանջը համարվում է Մասնակցի կողմից ստացված, եթե այն ուղարկվել է Մասնակցին ցրիչի կամ փոստային առաքման միջոցով սույն համաձայնությունում նշված հասցեով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ Մասնակիցը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Պահանջի ուղարկման օրը որոշվում է Պատվիրատուի ելքային ամսաթվով կամ փոստի ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով:

1.1.3 Մասնակիցն իրավունք է վերապահում Պատվիրատուին, սույն Պայմանագրի 1.1.2 կետում սահմանված ժամկետում տուժանքի վճարումը չկատարվելու դեպքում, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումարը, սույն պայմանագրի 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Մասնակցին սպասարկող «Մասնակցին սպասարկող բանկի անվանումը» բանկում կամ Մասնակցին սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Մասնակցի ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը» հանձնարարում է «Մասնակցին սպասարկող բանկի անվանումը» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն Պայմանագրի 1.1.2 կետում սահմանված ժամկետում տուժանքի վճարումը չկատարվելու դեպքում, Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Մասնակցի բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

ԲԱԺԻՆ 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի մասին սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև սույն համաձայնության Մրցույթի շրջանակներում Օրենքին համապատասխան Պատվիրատուի և Մրցույթի հաղթողի միջև պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ Մրցույթը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն պայմանագով Մասնակից տված համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Մասնակցի կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

ԲԱԺԻՆ 3. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արդշինբանկ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, Գր. Լուսավորչի 13
Լիազորված անձ՝

Գործերի կառավարիչ՝ Հրաչյա Առաքելյան

ՄԱՍՆԱԿԻՑ

_____
_____
_____